

# «Արցախյան շարժում»

## *Էլեկտրոնային շտեմարան*

Հայաստանի ազգային գրադարանի Մատենագիտության և գիտական հետազոտությունների բաժնում 2015թ. սեպտեմբերից սկսվել են «Արցախյան շարժում» Էլեկտրոնային շտեմարանի ստեղծման աշխատանքները: Այն իր տեսակի մեջ եզակի է և ներկայացնում է 1988-ից առ այսօր հրատարակված պարբերականների, ժողովածուների, գրքերի նյութերը, որոնք տարիներ շարունակ համալրվել են բաժնի համապատասխան թեմատիկ քարտարանում: Շտեմարանի մեջ ընդգրկվում են թեմային առնչվող բոլոր հոդվածներն անխտիր՝ առանց գտման կամ կողմնապահության՝ վերլուծությունները թողնելով համապատասխան մասնագետներին, քանի որ շտեմարանի խնդիրը Արցախյան շարժման ամբողջ գործընթացը ներկայացնելն է՝ իր դրական կամ բացասական մեկնաբանություններով: Նյութը ընդգրկուն է և արտացոլված է խորագրերի, ենթախորագրերի մեջ: Շտեմարանը որոնելի է յոթ գլխավոր դաշտերով՝ որոնման դաշտ, վերնագիր, հեղինակ, նյութի տեսակ, աղբյուր, տարեթիվ և բանալի բառ: Հեղինակային և վերնագրային դաշտերում անունները կամ վերնագրերը դասակարգված են ըստ այբբենական կարգի: Նյութի տեսակ դաշտում առանձնանում են թերթ, ամսագիր, գիրք, տեղեկատվական միջոցներ: Աղբյուր դաշտում տրված են այն թերթերի կամ ամսագրերի անունները, որոնցից քաղվում են հոդվածները՝ ըստ իրենց տարեթվերի, հրատարակության համարի, ամսաթվի: Որոնման դաշտը հնարավորություն է տալիս հոդվածը գտնել ըստ տարեթվի, վերնագրային բառի, նյութի տեսակի կամ հեղինակի: Այս պահի դրությամբ ներառված է ավելի քան 200 հոդված: